բէային ոչ որ ազգութիւն չէ համարում։ Հրէաները ազգութիւն չեն, Նրանք աղանդ են միայն, որովհետև Նրանք կորցրին ազգութիւնը կապող երկու գլխաւոր օրգանական գործիքները՝ հայրենիքը և լեզուն։ Եթէ Նրանք կորցնելով էլ հայրենիքը, պահպանէին իրանց մայրենի հին լեզուն, կամ կարող էին իրանց հին լեզուից ստեղծել մի Նոր, կենդանի մայրենի լեզու, գուցէ Նրանք դեռ կը համարվէին մի առանձին ազգութիւն։ Այժմ հրէաները ամեն տեղ միմիայն աղանդ են կազմում։ Ֆրանսիայում հրէան ֆրանսիացի է, Հվէյցարիայում շվէյցարացի է, Գերմանիայում գերմանացի է, Անգլիայում անգլիացի է։

Դարձեալ մի օրինակ։ Ռունգարացիները եկան Եւրոպա Ասիայի խորքերից և գետեղվեցան Եւրոպայի կենտրոնում իրանց համար խորթ և օտար ազգութիւնների մէջ։ Նրանք մի տեղ գետեղվեցան և ցիր ու ցան չեղան։ Բայց Նրանք պահպանեցին և զարգացրին իրանց ազգային լեզուն։ Եւ չը նայելով որ Նրանք գրաւեցին Նոր հողեր, ուրեմն ստեղծեցին իրանց համար Նոր հայրենիք, չը նայելով որ Նրանք հեթանոսներից կաթոլիկ դարձան, ուրեմն փոխեցին կրոնն էլ,—բայց Նրանք չը կորցրին իրանց ազգութիւնը, միմիայն այն պատճառով, որ չը կորցրին իրանց մայրենի լեզուն և ստեղծեցին մի Նոր հայրենիք։

Դարձեալ մի օրինակ։ Հվէյցարական ազգութիւնը կազմվեցաւ երեք ազգութիւններից՝ ֆրանսիացիներից, գերմանացիներից և իտալացիներից։ Ուրեմն երեք լեզուներ են տիրապետում Հվէյցարիայում, բայց դարձեալ բոլոր շվէյցարացիները միասին վեր առած կազմում են մի ազգութիւն, որովհետև ունեն իրանց սեփական հողը, իրանց հայրենիքը։

Ուրեմն ազգութեան գլխաւոր հիմունքները երեք են՝ ցեղը, լեզուն և հայրենիքը։

Բայց ազգութիւնը կարող է գոյութիւն ունենալ և այն ժամանակ, երբ այդ երեք գլխաւոր հիմունքներից երկուսը պահպանվել են։ Այդ երկուսն են հայրենիքը և լեզուն։

Եթէ ազգութիւնը պահպանել է իր հայրենիքը, իսկ կորցրել է իր լեզուն, Նա կը կորչի որպէս ազգութիւն, բայց ինքն իրանից կարող է ստեղծել մի Նոր ազգութիւն, կամ նա կը կլանվի մի աւելի մեծ, կամ բարոյապէս աւելի ուժեղ ազգութիւնից, ինչպէս օրինակ լեհացիները պրուսական Պոզնանի մէջ։ Եթէ մի ազգութիւն կորցրել է իր հայրենիքը և պահպանել է իր լեզուն, Նա կը կորչի, եթէ երկրագնտիս մի ուրիշ տեղ չը ստեղծի իր համար մի Նոր առանձնական հայրենիք, ինչպէս օրինակ ունգարացիները կամ ամերիկացիներն են արել։ Իսկ եթէ Նա չը կարողացաւ իր համար ստեղծել մի Նոր, առանձնական հայրենիք, այլ ցիր ու ցան եղաւ այլ ազգութիւնների մէջ,—այն ժամանակ շուտով կը կորչի և Նրա մայրենի լեզուն էլ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այս օրերս վախճանվեցաւ ԹԷՖԼԻՍՈՒՄ վէրգիմը Խմենովիչ Ռէվիմովսկի, որ երկար ժամանակ ուսուցիչ էր Գիմնազիայում, յետոյ Գիմնազիայի դիրեկտոր էր և վերջապէս ուսումնարանական հոգաբարձուի օգնական էր։ Վերջին երկու, երեք տարիներ Նա ծառայութիւնից հրաժարական տուած էր և մանաւոր մարդու պէս էր ապրում Թիֆլիսում։

—

«Գ0Լ0СЪ» լրագրի թղթակիցը, խօսելով «Մշակի» յօդուածի մասին Թիֆլիսի Դուման վերաբերութեամբ, անցնում է տեղական մամուլի դրութեան խնդրին։ «Ը նայելով բոլոր արգելքերին, պէտք է խոստովանվել, ասում է ռուս լրագիրը, որ տեղական մամուլը հաղիւ դաւանանում էր այն բարձրը կոչմանը, որին պէտք է նուիրվի և բերեց մեր հասարակական զարգացմանը անհերքելի օգուտ։ Մեզ վրա միմիայն տպաւորութիւն գործեց այն լուրը, որ գաւառական մամուլի դրութիւնը կը բարելաւվի։ Մեր տեղական մամուլի վերջին պրոցէսների շարքը ապացուցեց կարծեմ որ ցնորական մեզ մեծ մեծ էլ, գաւառներում դարձել է մի անախրոնիզմ (այսինքն հնացած հիմնարկութիւն), ասելացնում է «Գ0Լ0СЪ» լրագիրը։ Գաւառները, ասելիքան թէ մայրաքաղաքները պահանջ են զգում այն պայմանների փոփոխութեան, որոնք ստեղծում են մեր հասարակութիւնը անտարբեր կերպով վերաբերվել դէպի մեր կեանքի բազմակողմանի առաջադիմութիւնը։»

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ, աչակերտ բէալական դպրոցի Պատուանդատուր Իպմիրեանցից ստացանք 10 բուլլ յօգուտ Վասպուրականի հայ սովատանջների։

—

Վաղը, չորեքշաբթի օր, պ. Կորիձէ երգիչը տալու է Ազիզեանու թատրոնում մի կոնցերտ, վրաց սիրողների մասնակցութեամբ։ Պ. Կորիձէ երգեցողութիւնը Խտալիայում է սովորել և արդէն մի քանի տարի է երգում է Խտալիայի ամենայայտնի թատրոններում։

—

Վանից, սովելոց յանձնաժողովի նախագահ Խրիմեան հայրիկից ստացանք երկու օր առաջ հետեւեալ հեռագիրը։ «Ձեր ջանքը հաւաքված դրամից մասին մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք։ Աւատ անձրևներէն հունձքերը կառատանան։ Հաչեցուցակը կը զրկենք։ Կը յուսանք որ բարեյաջ շնորհէ ժողովրդը ներկայ փամանդէն կազատվի, եթէ նուիրատուութիւնք դարձեալ շարունակին մինչև աչուքը։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՕՆԴՕՆԻ ՄԻԹԻՆԳԸ

—

Ահա բաւական տանել է վեր սպասուած Աբէթինի ամսոյ 6-ին (Ը. Ն. Տ.) տեղի ունեցաւ ի Լոնտրա ընդ նախագահութեամբ Խրիմեան Հայրիկի, որ անմիջապէս գործի սկսաւ հաց և դրամ տալով սուված հայերուն։ Կեդր. մամուժողովէն մինչև ցարդ 10,000 սսմ. ոսկի չափ (մօտ 100 հազար բուբլի) դրամ եկած է վանայ մամուժողովին, որ ցորնի արուելով աղքատաց բաշխուած է։ Եթէ այսպիսի օգնութիւն չը լինէր, 10,000-էն աւելի հայ մեռած էր այժմ։ Մամուժողովին այս օրինակ նպաստ բաշխելն, որում չատ անգամ քիւրդ և թիւրք սովածներն ալ կը հաղորդուին, մեծ և խորին տպաւորութիւն մ'արեր է տեղոյն թուրք և քիւրդ ժողովրդոց մանաւանդ կառավարութեան պաշտօնէից վրայ, որք կը զարմանան տեսնելով Ներկայ ջանքը որ կը թափեն ազխարէն չորս կողմերու հայերէ Հայաստանի հայ բնակիչներն ազատելու համար։ Կը զգան թէ ոգի և զգացում կայ հայոց մէջ, քիւրդեր կը սարսափին իմանալով թէ թէ ունին եղեր հայերն, թիւրքերն կանիձեին իրենց կառավարութիւնն որ հայոց չափ չը կինար և չաշխատեր պաշտպանել իր ժողովուրդ սովու երեսէն։ Սովելոց խնամատար մամուժողովն Զատիկի իրիկուն և առաւօտ ճաշ տուաւ ընդհանուր ազքատաց անխտիր։ Դար կիւրակէի առաւօտ ալ ռուսական փոխ-հիւպատոս վեսմ. պ. Կամսարականն իւր անձնական ծախքով սեղան տուաւ զաբեալ ամեն ազգի և կրօնի պատկանող աղքատ սովածներու, որք 4000-էն աւելի եղան ուտողներն։ Վ.ս.սմ. պ. Կամսարականի այս առատաձեռնութիւնը զարմացուցաւ այն սիրալիր համակրանքն զոր ունէր տեղոյն ժողովուրդն վեհ. Ցարի ներկայացուցչին վրայ։ Ժողովրդական ընդհանուր համակրանաց ենթակայ լինելու յատկութիւնն զոր ունի վեսմ. պ. Կամսարականն, քիչերու արուած է։ Ազգային փոխ-հիւպատոս վեսմ. պ. Կէլէյնն ալ ապրիլ 24-էն սկսեալ ամեն

---

13 հազար քիլէ ցորեան նուիրած է սովելոց Սեբաստիայի ամբարէն։ Բայց դեռ մինչ այսօր մէկ չափ ցորեան անգամ չը հասաւ ոչ Վան, ոչ Բաշկալէ, ոչ Աշչէրտ, որք սոված գաւառաց գլխաւորներն են, և չը գիտենք թէ երբ կամ երբեք պիտի հասնին, թէեւ եթէ ճամբայ հանուած լինէին, ոչ թէ հասած կը լինէին տեղերն, այլ մինչ կասպից ծովը անգամ կրնային հասնել, զի եւան հրաչակն յունվարին մէջ տրատարակուեցաւ։ Բայց ոչ ապաքէն այս այն կառավարութիւնն է որ սանձանադրութիւն, կենաց ապահովութիւն, իրաւանց հաւասարութիւն և այլն և այլն որբաղան շնորհներ արած է ??? իւր հպատակց. միթէ 13 հազար քիլէ ցորեան խոստանալէ վերջ չը պիտի շորեէ։ Միթէ տեսնուած է մինչ ցարդ այսպիսի խոստմնադրժութիւն։ Մի և նոյն կառավարութիւն 200 քիլէ ալ Վանայ ամբարէն շնորհած էր, բայց դեռ չը շնորհուեցաւ այդ նուէրն ալ։ Այսպիսի պարագայի մէջ ինչպէս կարելի է չը յուիչուսկուիլ և չը հիանալ այն մեծ և ազանելի մարդասիրութեան վրայ, զոր ցոյց տուաւ քրիստոնէութեան, քաղաքակրթութեան և ազատութեան ՀՐԾ. ՄԱՐԻՏ (և ոչ թէ անգլիականի Նման) բարեկամ ամենողորմած Աղիքսանդր Բ. կայսրն ռուսաց և բոլոր հաւատացելոց, (վերջնոյս համար չիք ուրիշ կայսր) նուիրելով Հայաստանի սովելոց 10 հազար ֆրանկ, որ կ. Պոլսոյ կեդր. մամուժողովին յանձնուած լինցած է զոյգ ընդ համբաւոյն որ Նոյն նուէրն հաղկեց։ Ապահով Հայրիկ և Աղէքսանդր Բ. Օգոս. կայսեր կառավարութիւնների տարբերութիւնը թող տեսնեն մինչև իսկ այն ազգեր, որք լսող Պիդոնսվիլդի ախտով կուրացած են։ Յորմէ հետէ սով կը տիրէ մինչև այսօր դեռ. ոչ մէկ տեղէ արմտիք չը հասաւ այստեղ. այդ է պատճառն որ երթալով կը թանգանայ ամեն ուտեստի գին։ Ոչ ոք կարող էր բերել բացի կառավարութենէն, բայց նա ալ չը բերաւ։ Զը կարիձք թէ չէր կարող արմտիք բերել Վան, այլ չուզեց, պատճառն ասելիքը արդէն։ Բայց պաշտօնեաների հեռանալ անուլի գործը որ լսէք, ինչ պիտի ասէք։ Փոխանակ սովու ազէտներն թեթեւցնելու, փոխանակ դրամ և հաց տալու ժողովրդեան, փոխանակ շնորհելու Նորա հարկերն, փոխանակ յետագայելու իւր ամեն պահանջումներն, Նոյն իսկ այս տաղնապալից ժամանակն մէջ մեծ թանգութեամբ կը հաւաքէ տուրքերն։ Հարկերը կը բանտարկէ, որոց ընտանիքն անօթի կը մնանին տան մէջ, որոնք կը բանտարկի, ոչք իրենց ծնողաց միայ մխիթարանն և կենաց մրջոցն էին։ Նոքա որք լիար ալիւր փոխանակ 3 դրուշի որ սովորական գինն էր, այժմ 80 դրուշ գնել ստիպուած են, կը հրաւիրվին մեր արդարախնամ կառավարութիւնն տուրք տալ։ Մինչ այխարէի չորս կողմերէն սատկ կը թափի վանս սովամահներն տարատէս, տեղւոյս կառավարութիւնը անհոգ և անփոյթ կը հաւաքէ իւր տուրքերն կորզելով սոված ձեռքէն այն լումայն, որ մուրալով ձեռք բերած էր մէկ օրական պարէն հայիպեթ։ Կարաչեմ ցոյց տուէք ազգաց պատմութեան մէջ սորա նման անգութ և անխիղճ օրինակ կայ, զոր մեր կառավարութիւն ցոյց կը տայ։ Եւ դեռ դժբաղդաբար կան այնպիսի մարդիք (որոց մամնին միայն մարդկային, իսկ խելքը անբանի է) որ կը ցնորին յաւստ թէ թուրք կառավարութիւնը ինքնայորդոր և կամ լոկ բարոյական ձեւակոմով իւր քրիստոնեայ հպատակց վիճակը պիտի բարելաւէ, այն թուրք կառավարութիւնը, որ մանաւոր ջանիւք սով առաջ կը բերէ, որպէս զի իւր հպատակ քրիստոնեաներն կոտորէ։ Եւ որպէս զի սովուն տագնապն բոլորովին ծանր և մահաբեր լինի, մի կողմէն կը փութայ սոսկալի խստութեամբ հաւաքել տուրքերն այնպիսի ժողովրդէ, որոյ իւրաքանչիւր դասակարգին մէջ բազմաթիւ սովամահներ կը լինին ամեն օր և ամեն ժամ։ Ժամանակակից պատմաբանից կը յանձնարարամ թուրք կառավարութեան այս ընթացքը, այս ժողովրդասպանութիւն, այս հրէշութիւն, որ Նոքա արձանագրեն պատմական էջերու մէջ։ Այս կացութենէ Նոյն կառավարութեան ուրիշ գաղտնարտութիւնն ալ պատմել, որ Պիրմանի, Աֆղանիստանի և Զուլուխանի մէջ անգամ կարելի չէ յուսալ թէ իւր օրինակն ունի։ Ահա թէ ինչ է այն։

Այս տարուան ձմեռն սովորականէն չատ աւելի Երկարատև և չատ աւելի ձիւնաբեր լինելով ինչպէս մարդոց Նոյնպէս և կենդանեաց համար սով եղաւ, որում միմիանաւոր ոչխարներ ջարդվեցան և հազար ոչխար ունեցողն այժմ մէկ հատ անգամ չունի։ Իսկ կառավարութիւնն գիտանալով այս բան, փութացաւ կոտորածի սատակութիւնէն առաջ մարդկ. խրիկ և հանրել տուաւ ոչխարներն։ Հաշիւ բերելն եւթ երկու չարաթ քաշեց կամ ոչ, կոտորածն սկսաւ, իսկ կառավարութիւնը դիակներն աչքի առաջ տեսնելով հանդերձ չուզը իսկ պահանջելն կենալ, այլ ընդհանրապէս առանց մէկ զրուշ գինվելու, մեծ խստութեամբ և փութով հաւ. քիլ կը ջանայ ոչխարաց տուրքն (կամուտ) որ հատի 3 դրուշ *) ոսկի տալին է, Հազարաւոր ոչխարաբուծներ որ այսօր չունին և ոչ մի հատ տրիպուած են վճարել 3-ական դրուշ վասն այն ոչխարաց, որոց դիակներն տանց քաշխռնուած մնաց կը սպառնան մարդոց իրենց հոտով։ Բայց պիտի ասէք թէ միայն հայերն կը նեղուին այդ բաներէն, տրոց և կամ ոչ։ Ոչ, գլխաւորապէս հայերն կը նեղուին, վասնզի կառավարութիւնը ամեն ժամանակ տուրք հաւաքած ատեն միայն հայոց վրայ սոսկալի խստութիւն կը բանեցնէ, ինչպէս և այժմ, իսկ թրքաց և քրդաց վրայ (վերջնոց մի մասն արդէն տուրքէ ազատ է) ամենեին չը ծանրանար. կամաց կամաց կանուն անցնցմէ, մէկ մասն կը նուիրէ, մի մասն ալ տարինեարով իր ցնտագէ։ Ասոնկան գինուորներն երբ հարկապահանջի պաշտօնով գիւղեր խրկուին, բնաւ քիւրդի գիւղ չեն իջնար, այլ միայն հայոց գիւղեր կը նստին, որ անխիղճ սրտով տարբեն հայերը չուայլ և ձեռքերնե անել տալով իրենց համար և կը ծեծեն ու կը տանջեն հայերն իրենց ծառայեցուցնելով։

Ահա ասենք և այսպիսի միջոցներ են զորս կառավարութիւնը ձեռք կառնու ներկայ սովուն տագնապին դէմ։ Ահա ուքա են Նորա միայ միջոցներն, որոնք սովու բարձման թէ սատակութեան կրնան ծառայել, ընթերցողաց կը թողում դատել։

Դառնանք պատմել թէ մեր ազգային ապարէքին մէջ ինչ միջոցներ ձեռք առնում են սովուն ազատներն թեթեւցուցնել։ Այս, միջոցներ ի գործ դրուած են և կը դրուին, բայց դէպա ազէտներն ամբարելու միայն կրնան ծառայել, իսկ սովը բառնալու կարող չեն, զի ձեռք առնուած միայ միջոցը է հաց կամ դրամ տալ հայ սովելոց, որ չը մեռնին. թէ որուած ցորեն և թէ դրամն ոչ թէ սովը բառնալու կրնան ծառայել, այլ միմիայն օրէ օր ուտեստի համար են իւրաքանչիւր անձի որ չը մեռնին սովէն։ Այսպիսի նպաստներ տալու համար կեդր. մամուժողով մը կազմուած է Կ. Պոլիս, որ երկրագնդի չորս ծայրերէն քիչ կամ չատ նուէրներ կընդունի. Օգոս. Աղէքսանդր Կայսեր նուիրած 10 հազար ֆրանկի գումարն ալ այդ մամուժողովին յանձնուած է։ Այդ մամուժողովը որ պատրիարքի հովանաւորութեան տակն է, փեսրամամոյս վերջին մի մամուժողով կազմեց այսուեղ ընդ նախագահութեամբ Խրիմեան հայրիկի, որ անմիջապէս գործի սկսաւ հաց և դրամ տալով սուված հայերուն։ Կեդր. մամուժողովէն մինչև ցարդ 10,000 սսմ. ոսկի չափ (մօտ 100 հազար բուբլի) դրամ եկած է վանայ մամուժողովին, որ ցորենի արուելով աղքատաց բաշխուած է։ Եթէ այսպիսի օգնութիւն չը լինէր, 10,000-էն աւելի հայ մեռած էր այժմ։ Մամուժողովին այս օրինակ նպաստ բաշխելն, որում չատ անգամ քիւրդ և թիւրք սովածներն ալ կը հաղորդուին, մեծ և խորին տպաւորութիւն մ'արեր է տեղոյն թուրք և քիւրդ ժողովրդոց մանաւանդ կառավարութեան պաշտօնէից վրայ, որք կը զարմանան տեսնելով Ներկայ ջանքը որ կը թափեն ազխարէն չորս կողմերու հայերէ Հայաստանի հայ բնակիչներն ազատելու համար։ Կը զգան թէ ոգի և զգացում կայ հայոց մէջ, քիւրդեր կը սարսափին իմանալով թէ թէ ունին եղեր հայերն, թիւրքերն կանիձեին իրենց կառավարութիւնն որ հայոց չափ չը կինար և չաշխատեր պաշտպանել իր ժողովուրդ սովու երեսէն։ Սովելոց խնամատար մամուժողովն Զատիկի իրիկուն և առաւօտ ճաշ տուաւ ընդհանուր աղքատաց անխտիր։ Դար կիւրակէի առաւօտ ալ ռուսական փոխ-հիւպատոս վեսմ. պ. Կամսարականն իւր անձնական ծախքով սեղան տուաւ զաբեալ ամեն ազգի և կրօնի պատկանող աղքատ սովածներու, որք 4000-էն աւելի եղան ուտողներն։ Վ.ս.սմ. պ. Կամսարականի այս առատաձեռնութիւնը զարմացուցաւ այն սիրալիր համակրանքն զոր ունէր տեղոյն ժողովրդոց վեհ. Ցարի ներկայացուցչին վրայ։ Ժողովրդական ընդհանուր համակրանաց ենթակայ լինելու յատկութիւնն զոր ունի վեսմ. պ. Կամսարականն, քիչերու արուած է։ Ազգային փոխ-հիւպատոս վեսմ. պ. Կէլէյնն ալ ապրիլ 24-էն սկսեալ ամեն

*) 3 դրուշ ոսկի տալն հաւասար է ռուսաց 20 կոպէկին։

Լորա Քաղաքապետին։ Սարա մանրամասնությունները Լոնտրայի թերթերէն թարգմանելու դժուարութիւնը չեմ կարծեր որ ունենաք, բայց և այնպէս՝ այս մարդասիրական գործին մի քանի կէտերը գրի առնուլ աւելորդ չեմ համարիր։

Միթինկը կը բաղկանար 200-ի չափ անձերէ։ Նախ՝ Լորա Քաղաքապետն ընտրը առանձնաբանութեամբ մը առանձը բացա, և ապա Անգդ. Ցանձնաժողովոյն գանձապետ Պարոն Հէնրիք՝ խնդրոյն վրայ մինչև ցարդ սառցած տեղեկութիւնները ժողովոյն ներկայեց. յետոյ Ագնիս Պ. Ճէյմս Պրայս խօսք առնելով ընդհանուր տեղեկութիւն մը տուաւ սովին երկրին վրայ, բացատրեց թէ Փարբ-Ասիոյ ո՛ր կողմերն է, թէ ո՛րչափ տարաբնութիւն ունի, թէ ինչ ժողովուրդներէ և կրօնքներէ կը բաղկանայ. թէ ինչ պատճառներէ յառաջ եկած է, և թէ վերջապէս Անգդ. ազգին կը պատկանի այդ թշուառ երկրին օգնութեան ձեռք կարկառել, քանի որ, կրսէ, Փարուն Ասիոյ զմեզ պաշտպան հրատարակեցինք ընդհանուր աշխարհի առջև, ևայլն և այլն։ Ասնոր Պ. Ճէյմս պարզ և մէկին եղանակաւ բացատրելէն յետոյ, Պրընապլ հպատրապետը (Մաժոր) ասր եկաւ։ Այս անձը Թուրքս-Ռուս պատերազմին սկիզբը՝ նախորդ կառավարութեան կողմանէ յատուկ պաշտօնով մ՚արագ ճանրորդութիւն մ՚ըրած էր ի Հայաստան, և ի դարձին գիրք մ՚ալ հրատարակած է «Հարիւրապետ Պրընապլ ձիու վրայ» մականունով, որդ մէջ Հայոց նկատմամբ հեղնօրէն կը խօսի և մաս մը ճշմարտութիւնից էլ մեծ մաս մ՚ալ թիւր և սխալ տեղեկութիւններ կուտայ։ Թայմս լրագիրը, ժամանակին իւր գիրքը քննադատելով, իրաւամբ կրսէ թէ՝ «ազգաց վիճակին և հանգամանաց նկատմամբ ձիու վրայ քաղուած տեղեկութիւնք արժանահաւատ չեն կարող լինիլ։» Պրընապլ հպատրապետը մէն մի քաղաքի մէջ Հայոց մի քանի ժամկամ առաւ առաւելն մի կամ երկու օր կեցած է, և այն ալ կառավարական պաշտօնատունէ՝ Ի պաշտօնատուն օթևանելով, որդ տեղեկութեանց ուղղակի աղբիւրն եղած է, ուստի այն Հայն՝ որ իւր գիրքը կարդացած էր կամ անոր վրայ գաղափար մը ունեցած, անանորժ ապատարութեան յիշատակ մը կը կրէր. սակայն սովելոց Միթինկին մէջ ըրած պարզ և անպանծ ատենախօսութիւնն ամենազգայուն կերպիւ կը նկարագրէր հէք սովելոց թշուառութիւնն այն երկիրներուն մէջ ուսկից ինք անցած էր։ Զիս գոհացուցիչ յուզեց երբոր ըսաւ. «Ներկայիցիդ, Տիկնոջ իմ և Տեարք, երբ մեք այժմ ձոխ սեղաններու առջև կը բազմինք, առաւ և կուշտ մեր խորտիկները կը ճաշակենք, մտարերենցիք որ անդին բիւրաւոր ողորմելիք՝ անխնայելի Քրիստոնեայ և Մահմետականք՝ ինչ կուտեն. ահաւասիկ ցուցնեմ Ձեզ կիրանէին, ըսաւ, և հանեց գրպանէն Ծրարիկ մը, զոր իւր մէկ բարեկամն իրեն զրկեր էր, պատառ մը այն հացէն՝ որով այդ ժողովուրդները կը կերակրուէին. և ահաւասիկ, ըսաւ, իրենց խորտիկն ու համագաքը, որոց տասնեակներ երորդ մասն հազիւ հացի զոյացութիւն է, մեծացեալն ահա կը տեսնէք որ ծառի կեղևներ, խոտեր և այլ չը գիտեմ ինչ են։» Վերջապէս այդ գինովական խիստ բիւրուրութեան և կրթութեան ներքև այդպիսի փափուկ սիրտ մը ցոյց տուն անակընկալ բան մ՚եղաւ, և սիրելի յիշատակի մը ապատարութիւն ըրաւ իմ վրայ, որ ապերոյս չը կայ որ ինձմէն շատերն ալ նոյն ապատարութիւնն ունեցան։

Նաև մեր Լոնտրանայի և ընդհանրապէս անդ գրականութեամբ զբաղեալ Պ. Ցաղրեան ալ առանձնասնց, գլխաւորապէս այն թէ՝ Հայք ուր որ ապատ գտնուեցան այդ արեանէն, չը դանդաղեցան իրենց հայրենակցաց ձեռնտու գտնուելու։ Եայն. Հուսկ յետոյ Պ. Արսենան Մանչեսթրցի Հայկական մասնակցութիւնը կոդմանէ շնորհակալութիւն յայտնեց ժողովին, որ իրենց երկրին ապահոյը կարեկցութիւն և գութ ցոյց կուտար։

Արդ, ապէսք բարեկամ, Պրընապի հպատրապետին խօսքերն հարկ է որ մեք Հայքս աւելի ուշադրութեան առնուինք. վասն զի խնդիրն աւելի մեզ կը պատկանի և մեր ազգային կը սպառնայ։

Նաև վասյ է այն գրութիւնն, որ ամեն ինչ օտարէն կը սպասէ, որով կարծես թէ կամովին թշուառութեան կը դիմէ։ Ո՛ Հայ, դու նախ պէտք է քեզի օգնես, որ քեզի օգնող գտնաս. այս է աշխարհի փորձառութիւն . . . :

Ուստի՝ մեր ազնուամիտ ազգայնոց, և մանաւանդ Հարաստներուն ուշը կը հրաւիրեմ, որ իրենցմէ մի քանի հարիւր ոսկի պակասելով բան մը չեն զգար. նրմանպէս անոնց՝ որք կարող են իրենց զուարճութիւններէն և ընտանեկան սեղանէն բաժին մը հանել այլ և այլ զրկանաց ենթարկեալ զժբաղդ ժողովրդոց, որոնք՝ «մի փշուր հացս կաղաղակեն։ Ձեմ կարող չը լիշել նաև անոնք՝ որք իրենց կարողութենէն վեր օգնած են. փա՛ռք և պատի՛ւ այսպիսիներու։

(Մասիս)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՏԱՋԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 19 յունիսի։ Լուր է տարածված, որ Անգլիան հրաւիրեց Բուլիիարային 180,000 ֆունտ ստերլինգ վճարել Թիւրքիայի Կոստանդդգնի երկաթուղու համար։

ԲԱՅՈՆԱ, 18 յունիսի։ Մի պատգամաւորութիւն Դուլցինոյից եկաւ Ակուտարի նահանգապետի մօտ և նրան հարց առաջարկեց Դուլցինոն չերնոգորցիներին զիջելու մասին։ Նահանգապետը պատասխանեց, որ ինքը չը գիտէ և խորհուրդ տուեց հոգալ Դուլցինոյի պաշտպանութեան համար։ Ալբանական մուսիթիւնը 600 զինուորված մարդ ուղարկեց Դուլցինոյի պաշտպանութեան համար, իսկ նրա պահպանող զօրքերը հեռացան Սկուտարի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունիսի։ Մեծ ոգիանոսի ռուսաց նաւատորմի շտաբի գլխաւոր նշանակված է Ծովապետ Իպանթիեզով, որ այժմ Սապտնիայումն է։

ԲԵՐԼԻՆ, 20 յունիսի։ Երէկվան նիստի ժամանակ վերջնականապէս ստորագրված է կոնգիբինցիայի վիճակների ակտը, ընդունված է միաբան շրջաբերական, որով կոնգիբինցիայի վիճակները պէտք է հաղորդվին Թիւրքիային և Ռուսաստանին։

ԲԵԼԳՐԱԴ, 20 յունիսի։ Նօվօբազարի նահանգապետ Հասան-փաշա ցանկանալով ընդդիմանալ բրիստոնեաների և Թիւրքերի կռուին, սպանված է ալբանական մուսիթեան կողմնակիցներից։ Հեռագրական հաղորդագրութիւնները ընդհատված են։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20, յունիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 75 կ., երկրորդ 92⅛ ր., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 25 կ, ներքին 5% տոմսակի փոխառութեան տոմսակը արժէ 229 ր. 50կ., երկրորդ 224 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը 92 ր., երկրորդ 91 ր. 75 կ., երրորդ 91⅝ ր., ոսկի 7 ր. 72 կ.։ Ռուսաց 1 բուրլ Լոնդոնի վրա արժէ 25¹¹⁄₁₆ պենս, ռուսաց 100 ր. Բերլինի վրա 130 մարկ, Համբուրգի վրա 219 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 270 ֆր. 50 սանտիմ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, յունիսի 22։ «Инвалидъ» լրագիրը հաղորդում է, որ կոմկասեան 2-որդ զինուորական կօրպուսի գլխաւոր Տէր-Ղուկասով 4 ամսով արձակուրդ է ստանում արտասահմանում բժշկվելու համար։

ՅԵՏԻՆԻԷ, 21 յունիսի։ Այստեղ հասան ալբանական ցեղերի մի քանի առաջնորդներ և հանդիսապէս յայտնեցին, որ բոլորովին ոչ մի ուրիշ նպատակ չունենալով՝ բացի նպաստաւորութեամբ կապերը չունենալով ոչնչ նկատմամբ և որ ամեն երկրի մէջ ժողովրդեան մեծամասնութիւնը կը կազմէ, ինչ ատոնցան թշուառութեան ենթարկեցաւ այս անգամն թանգութեան երեսէն, որոց նման երբէք տեսնուած չէ երեր ի վան ժամանակակից մարդոց օրով և թէ որչափ մեծագուժմար պարարթ դոյացան այն դասակարգին վրայ։

Վերջին նիւթերնիս է պատմել թէ սովու բարձման համար ինչ հաւանականութիւն կայ։

Առ այժմ ընդհանուր հաւանականութիւնն այս է, թէ առաջիկայ հնձոց ժամանակն կը վերջանայ սովը, ասոր պատճառ այն է որ այս ձմեռ շատ յորդ ձիւներ եկան և ջուրն շատ առատ է, նաև գարնան անձրևներն ալ իրենց ժամանակին եկած են, միայն երկու անգամի անձրևներ մնացած է. եթէ անոնք ալ պէտք եղած օրերն տեղան, ալ կրնանք բոլորովին յուսալ սովու բարձումն։ Սերմանուած արմտիքը բաւական են, եթէ արդիւնաւէտ լինին, զի թէպէտ այս գարուն ոչնչ սերմանումն չեղաւ, բայց ուշն չափազանց սերմ ցանուած է, որոց բոլոր շատ գաշնչիլի է առ այժմ։ Նաև լուրեր հասան այստեղ թէ Աստրեսանի, Քիւրդիստանի և Պարսկաստանի հունձքերն ալ շատ առատ լինելու յոյս կընծայեն։ Բայց բոլոր սատնք ենթարկութեանց սահմանին մէջ են տակաւին և չեն կրնար իրականութեանց տեղ բռնել։ Այլ թէ կայ մի բան որ նշմարիա է այս մասին, այն է որ եթէ հունձքն առատ լինին, սովը կը վերջանայ։ Բայց թէ առատ պիտի լինին, պէտք է ժամանակին սպասել, իսկ թէ հունձքն առատ չեղան, այն ատեն ինչ պիտի լինի այս երկրին վիճակը, կը սոսկամ ասել. .

Նամակս վերջացուցեալ առաջ մի աւետիս ամսագրեցաւ, որ այս տեղեկութեանց վրայ վերացած սրտերնին փարթ ինչ մխիթարուի։ Այդ աւետիսն այս է։ Մայիս 2-ին գաւառս երեսփոխանական ժողովը իւր ներկայ 31 անդամոց 31 քուէներովն Խրիմեան սրբազան հայրիկն ժողովրդեան անասման բերկրանաց և բաղձանաց համեմատ ընտրեց առաջնորդ Վասպուրականի։

Սմբատ

որ կերակուր կը տայ աղքատաց մասնաւոր տան մը մէջ մասնաւոր պատրաստութեամբ մը։ Միայն կերակի օրերը բացառութիւն են իրրև սուրբ օր։ Նոյն սեղանին վրա օրական 200-էն 250-ի չափ աղքատներ կը կերակրուին։ Ցախան կը հոգացուի թուղթիարեան բողոքականաց մէջ բացուած ընդհանուր հանգանակութիւնի մը, որ դեռ կը շարունակի։ Ինչպէս կը տեսնուի ձեռք առնուած բոլոր միջոցներն հապա թէ ժողովուրդը ներկայ սովէն անձնատուր ազատէն մինչև նոր հունձն կատարելայ ժամանակ։ Իսկ թէ նոր հունձն կատարելայ յաջողութիւն կը խոստանայ սովը անհետացնելու, զայդ կը խօսնէք քիչ մը վերջ։

3) Կը գանք այժմ գրել թէ սովը մինչև ցարդ ինչ չափ կոտրած արեր է և դեռ կանէ։ Նրանկայ սովը որչափ որ հայերը կոտորելու համար նիւթուած մեքենայութեան մը արդիւնք լինելն յայտնի է արդէն, բայց արդարութիւն կը պահանջէ խոստովանել թէ աւաւելապէս քրդաց և թրքաց քան հայոց աղետարեր և կորստաբեր եղաւ և պիտի լինի, այնպէս որ գուցէ զոր փորեցին, նոքա ինկան անոր մէջ կրնանք ասել կատարեալապէս։ Վասն զի մինչև ցարդ սովամահ հայոց թիւը 500-ի չը հասնիր, իսկ քրդաց թէպէտ որոշ վիճակագիր չը կայ, բայց ամեն կերպով հաստատուած է որ իրենց բոլոր թիւն 1/10-էն աւելին կոտորուած է սովէն կամ ցրուած է անդարձ կորուստի մէջ։ Քիւրդերու դիակներն սովորական է տեսնել նոյն իսկ քաղաքի փողոցներուն մէջ ամեն օր և մինչև իսկ կառավարութեան դրան առջև։ Գիւղերէ ուրիշ գիւղեր երթալու ճանապարհաց վրայ նոյնպէս սոկպ կը տեսնուին քրդաց դիակներ, որք ինկած են սովամահ։ Ամբողջ քիւրդ գիւղեր կան որ փճացեր են կամ մահով կամ գաղթելով։ Վերջապէս համառօտ ասել սովը իւր բոլոր ահաւելի ներքոյներն քրդաց մէջ երեան հանեց և իւր բոլոր ու ամենամեծ ծանրութիւնը նոցա վրա թափեց։ Ինքզինքնին, որդիական, եղբայրական և ամուսնական կապերու խզումն սովի պատճառաւ՝ միայն քրդաց մէջ տեղի ունեցան, իսկ հայոց մէջ ոչ երբէք։ Թէպէտ հայ մեռածներ եղան, բայց իրենց ընտանեաց գիրքը փչեցին իրենց չունչ, իսկ քիւրդերու նման յանցաւ ճանապարհաց սովամահ ինալ մեռնել և անթաղ մնալով թռչնոց և գազանաց կերակուր լինիլ և այն այսպիսի տխուր արկածներ մինչև ցարդ երբէք չը տեսնուեցան և չը պիտի տեսնուին հայոց մէջ։ Այս անհուն տարբերութեան պատճառը այն էր, որ քրդերն բնաւ արմտիք չունենն, զի նոքա հոգացորդ չեն, իսկ հայերն որչափ ալ խեղճ էին, բայց և պնպնկ աւելի արմտիք ունէին և ունեն քան քրդեր։ Հայոց ունեցորդներն օգնեցին չունեցորաց, մինչև որ սովելոց խնամատարմանաժողովն օգնութեան հասաւ, ալ այնուհետև հայ արարած մը սովէ չը մեռաւ և մեծ յոյս կայ թէ այլ ևս չը պիտի մեռնին։ Նոյնպէս կենդանեաց կորուստն ալ քրդաց մէջ աւելի շատ եղաւ քան հայոց։ Զի հայոց խոտի և յարդի պաչարներն ալ հանեմատելով քրդաց ունեցածներուն՝ աւելի շատ էին։ Բաց ասած քրդաց մէջ ժանտամահ մ՚ալ ինկաւ անասնոց դիակներ և հում միս ուտելէ, որ ոչ նուազ կոտորած տուաւ նոցա, և որ, կը վախենք թէ փոխադրելով ընդարձակի և ընդհանուր չարդ առաջ բերի, զի բոլոր գիւղերու մէջ անթիւ անասնոց դիակներ կան ձգուած արևուն դէմ, որք կրնան օդն ապականել։ Սովը առաջ բերելու համար մեքենայ պատրաստողն ե՞թէ գիտնար թէ մեծ կորուստ և մեծ հարուածի քրդոց կը սահմանուէր, անշուշտ չը պիտի անէր զայս, բայց զի ցիտար էր, չը կրցաւ խորհել և հաղագաւորդին մէկ աչքն հանել տալու համար իւր երկու աչք հանել տալիս նմանեցաւ։

Վերջինչեալ երեք գլխաւոր գլուխներն գրելէ ետքը թէպէտ բաւական երկար եղաւ այս նամակ, բայց որպէս զի կատարեալ և որչափ կարելի է ամբողջ տեղեկագիր մը լինի այս, կարեր կը համարեմ յիշել այստեղ նաև թէ սովը ինչ ատեհան սասարկի է և թէ յաջորդ հնձոց ժամանակ վերջանալու յոյս կայ թէ ոչ։ Այդ երկուքն ալ յիշենք և վերջացուցենք։

ա) Սովուն սատկութեան ատենանն իսմանալու համար մեր արդդ ընթերցողներն թող բաղատանեն հետևալ թեւերն իրարու հետ։

Սովէն առաջ եղած գին. 1 օխա հաց 30 փարաս անցուկ գրաւ, (1 լիտ), 6 օխա ալիւր 3—4 գրուշ, (1 չափ) 33 օխա ցորեն 20—25 գրուշ, 1 օխա իւղ 10—12 գրուշ, 1 օխա պանիր 3—3½ գրուշ, 1 հատ հաւկիթ 1—2 փարա, 1 օխա բրինձ 4—4½ գրուշ, 6 օխա խատոր 8—9 գրուշ, 6 օխա բակլա 4—5 գրուշ, 1 օխա միս 2—2½ գրուշ, 6 օխա ճակնդեղ 10—15 փարա, 6 օխա կտաւատի իւղ 30 գրուշ, 6 օխա չամիչ 18—20 գրուշ, (1 չափ) 33 օխա գարի 8—10 *) (չափ), 33 օխա տարեկան 12—15 գրուշ, (1 չափ) 33 օխա կտաւատ 25—30 գրուշ, 1 բեռ յարդ 1 բարդ (30 խուրձ) խոտ 20—22 գրուշ, 1 լիտր կտաւատի դիրտ (կուսք) 2—2 գրուշ։ Հիմա կուսն գին. 1 օխա հաց 8—9—11—12 գրուշ անցուկ, (1 լիտ) 6 օխա ալիւր 75—85 գրուշ, (1 չափ) 33 օխա ցորեն 400—450 գրուշ, 1 օխա իւղ 44—48 գրուշ, 1 օխա պանիր 12—14 գրուշ, 1 հատ հաւկիթ 18—20 փարա, 1 օխա բրինձ 20—22 գրուշ, 6 օխա խատոր 140—150 գրուշ, 6 օխա բակլա 36—40 գրուշ, 1 օխա միս 10—12 գրուշ, 6 օխա ճակնդեղ 15—18 գրուշ, 6 օխա կտաւատի իւղ 180 գրուշ, 6 օխա չամիչ 96 գրուշ, (1 չափ) 33 օխա գարի 350—400 գրուշ, (1 չափ) 33 օխա տարեկան 300—350 գրուշ, (1 չափ) 33 օխա կտաւատ 400—430 գրուշ, 1 բեռ յարդ 160—180 գրուշ, 1 բարդ (30 խուրձ) խոտ 240—260 գրուշ, 1 լիտր կտաւատի դիրտ (կուսք) 50—60 գրուշ։

Բաւական կը համարեմք այսչափն դնել։ Մնացեալն ալ վերոյիշեալ համեմատութեամբ պէտք է հասկնալ։ Բայց յիշել արժան է որ թէ յիշուած նպաստներն և թէ ուրիշ ուտեստներն անուշով միայն գին ունեն, իսկ ուզուած ատեն անմիջապէս ձեռք բերել կարելի չէ, այլ մեծ դժուարութեամբ կը գտնուին։ Պէտք է գիտնալ նաև թէ գիներն միայն մէկ ամիսի մէջ յանկարծական կերպով չը բարձրացան ալնչափ, որչափ նշանակած եմք, այլ քիչ քիչ, օրէօր աւելնալով հասան ներկայ գնոյն, զոր նշանակեցինք ճիշդ այսօրի հրապարակագիրին համեմատ։

Երկարաբան չը լինելու համար ընթերցողաց կը թողուք մակարերել և ինքն իրենումն գտնել թէ որչափ հանստ կարողութեան տէր գերդաստաններ կործանեցան հնձիկապէս, թէ քանի չափաւոր հարստատ սուներ սնանկացան և թէ վերջապէս ժողովրդեան այն դասակարգ՝ որ օրական աշխատութեամբ կապերը չունենալով ոչնչ եկամտաց և որ ամեն երկրի մէջ ժողովրդեան մեծամասնութիւնը կը կազմէ, ինչ ատոնցան թշուառութեան ենթարկեցաւ այս անգամն թանգութեան երեսէն, որոց նման երբէք տեսնուած չէ երեր ի վան ժամանակակից մարդոց օրով և թէ որչափ մեծագուժմար պարարթ դոյացան այն դասակարգին վրայ։

Վերջին նիւթերնիս է պատմել թէ սովու բարձման համար ինչ հաւանականութիւն կայ։

Առ այժմ ընդհանուր հաւանականութիւնն այս է, թէ առաջիկայ հնձոց ժամանակն կը վերջանայ սովը, ասոր պատճառ այն է որ այս ձմեռ շատ յորդ ձիւներ եկան և ջուրն շատ առատ է, նաև գարնան անձրևներն ալ իրենց ժամանակին եկած են, միայն երկու անգամի անձրևներ մնացած է. եթէ անոնք ալ պէտք եղած օրերն տեղան, ալ կրնանք բոլորովին յուսալ սովու բարձումն։ Սերմանուած արմտիքը բաւական են, եթէ արդիւնաւէտ լինին, զի թէպէտ այս գարուն ոչնչ սերմանումն չեղաւ, բայց ուշն չափազանց սերմ ցանուած է, որոց բոլոր շատ գաշնչիլի է առ այժմ։ Նաև լուրեր հասան այստեղ թէ Աստրեսանի, Քիւրդիստանի և Պարսկաստանի հունձքերն ալ շատ առատ լինելու յոյս կընծայեն։ Բայց բոլոր սատնք ենթարկութեանց սահմանին մէջ են տակաւին և չեն կրնար իրականութեանց տեղ բռնել։ Այլ թէ կայ մի բան որ նշմարիա է այս մասին, այն է որ եթէ հունձքն առատ լինին, սովը կը վերջանայ։ Բայց թէ առատ պիտի լինին, պէտք է ժամանակին սպասել, իսկ թէ հունձքն առատ չեղան, այն ատեն ինչ պիտի լինի այս երկրին վիճակը, կը սոսկամ ասել. .

Նամակս վերջացուցեալ առաջ մի աւետիս ամսագրեցաւ, որ այս տեղեկութեանց վրայ վերացած սրտերնին փարթ ինչ մխիթարուի։ Այդ աւետիսն այս է։ Մայիս 2-ին գաւառս երեսփոխանական ժողովը իւր ներկայ 31 անդամոց 31 քուէներովն Խրիմեան սրբազան հայրիկն ժողովրդեան անասման բերկրանաց և բաղձանաց համեմատ ընտրեց առաջնորդ Վասպուրականի։

Սմբատ

*) 1 չափ 33 օխա է, 1 լիտրն 6 օխա, 1 օխան 400 տրամ, 144 գրամն 1 լիպրէ, կամ ուրիշ հաշուով, 3 գրամն 10 գրամ է ըստ զազրիական չափուց։